# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tsaghkunq.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 70

## ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասին 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով <<Մաչանյան Կարեն>> ԱՁ-ի կողմից տրված հողամասի բաժանման հատակագիծը և սեփականատեր Վիգեն Սուքիասյանի 2019 թվականի հոկտեմբերի 11-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքում Վիգեն Վիլեմի Սուքիասյանին սեփականության իրավունքով պատկանող 04-052-0019-0054 կադաստրային ծածկագրով անշարժ գույքից առանձնացվող մի մասին՝ Կողմ 1 - 0.1137 հա մակերեսով հողամասին տալ հասցե՝ Արմավիրի մարզ, գ. Ծաղկունք, Պ. Սևակի փողոց N17/1:

2. Նույն հողատարածքի մնացած մասին՝ Կողմ 2- 0.0854 հա, տալ հասցե՝ Արմավիրի մարզ, գ. Ծաղկունք, Հոկտեմբերյան փողոց, N 19:

3. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման գրասենյակ՝ պետական գրանցում տալու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 14
գ.Ծաղկունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tsaghkunq.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 71

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի 4-րդ կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման դրույթներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խանգարում այլ անձանց իրավունքներն և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հիմք ընդունելով Վիգեն Վիլհեմի Սուքիասյանի 2019 թվականի հոկտեմբերի 11-ի դիմումը, <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ի կողմից տրված հատակագիծը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքում Վիգեն Վիլհեմի Սուքիասյանին սեփականության իրավունքով պատկանող գ. Ծաղկունք, Հոկտեմբերյան փողոց N19 հասցեում 0.0854 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 165.3 քմ արտաքին մակերեսով պահեստը և 11.0 քմ պարիսպը ճանաչել օրինական:

2. Քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվող ինքնակամ կառույցների օրինականացման վճարը արտադրական նշանակության կառույցների 1.0քմ համար 2550 դրամ է: Շենք-շինությունների օրինականացման համար ընդհանուր վճարը կազմում է՝ 176.3քմx2550=449565 (չորս հարյուր քառասունինը հազար հինգ հարյուր վաթսունհինգ) դրամ, որը պետք է վճարել Ծաղկունք համայնքի վարչական բյուջեի 900325002864 գանձապետական հաշվին:

3. Հողամասի և շինության հասցեն թողնել անփոփոխ՝ Արմավիրի մարզ, գ. Ծաղկունք, Հոկտեմբերյան փողոց N19:

**4. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարը չվճարելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:**

**5. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքներն ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:**

**6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**2013 թ. նոյեմբերի 15**
**գ.Ծաղկունք**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tsaghkunq.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 72

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի 4-րդ կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման դրույթներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խանգարում այլ անձանց իրավունքներն և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հիմք ընդունելով <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ի կողմից տրված հատակագիծը, Վիգեն Վիլհեմի Սուքիասյանի 2019 թվականի հոկտեմբերի 11-ի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքում Վիգեն Վիլհեմի Սուքիասյանին սեփականության իրավունքով պատկանող գ. Ծաղկունք, Պ. Սևակի փողոց N17/1 հասցեում 0.1137 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 58.9 քմ արտաքին մակերեսով պահեստը և 48.8 քմ խանութը ճանաչել օրինական:

2. Քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվող ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է.

ա) արտադրական նշանակության կառույցների յուրաքանչյուր 1.0քմ համար՝ 2550 դրամ՝ 58.9քմx2550=150195 (մեկ հարյուր հիսուն հազար մեկ հարյուր իննսունհինգ) դրամ

բ) հասարակական նշանակության կառույցների յուրաքանչյուր 1.0քմ համար՝ 3400 դրամ՝ 48.8x3400=165920 (մեկ հարյուրն վաթսունհինգ հազար ինը հարյուր քսան) դրամ:

Շենք-շինությունների օրինականացման ընդհանուր վճարը կազմում է՝ 316115 (երեք հարյուր տասնվեց հազար մեկ հարյուր տասնհինգ) դրամ, որը պետք է վճարել Ծաղկունք համայնքի վարչական բյուջեի 900325002864 գանձապետական հաշվին:

3. Հողամասի և շինության հասցեն թողնել անփոփոխ՝ Արմավիրի մարզ, գ. Ծաղկունք Պ. Սևակի փողոց N17/1:

4. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարը չվճարելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքներն ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

20 13 թ. հունվարի 15

գ.Ծաղկունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tsaghkunq.armavir@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 73

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Մերսեդա Խաչատրյանի 2019 թվականի հոկտեմբերի 16-ի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մերսեդա Պարույրի Խաչատրյանին Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի Շիրազի 1 փողոց NN 39 և 41 տնամերձ հողամասերում բնակելի տուն և պարիսպ կառուցելու համար տալ շինարարության թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 21

գ.Ծաղկունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tsaghkunq.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 74

## ՆԱՐԻՆԵ ԱՐՇԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, 29-րդ կետի դ) ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքում Նարինե Արշակի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 04-052-0001-0016 ծածկագրով տնամերձ հողամասի Արմավիրի մարզ, Ծաղկունք համայնքի Գայի փողոց N26 հասցեն վերահասցեավորել Արմավիրի մարզ, Ծաղկունք համայնք, Գայի փողոց N22:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման գրասենյակ՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

20 19 թ. հոկտեմբերի 24
գ.Ծաղկունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tsaghkunq.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 75

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Արթուր Առաքելյանի 2019 թվականի հոկտեմբերի 16-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արթուր Վիտալիկի Առաքելյանին Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի Գայի փողոց թիվ 20 հողամասում չրանոցի պահեստ կառուցելու համար տալ շինարարության թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

20 13 թ. հոկտեմբերի 28
գ.Ծաղկունք